

# ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ

(Les affaires sont les affaires)

Կոմիտիա Յ գործողութեամբ

ՕԿՏԱԽ ՄԻՐԲՈՒ

(Թարգմանութիւն Փրանսերէնից)

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Միա օրը առաւտեան

Բեմը ներկայացնում է մի փոքրիկ սալոն ձև լա Լիւդովիկոս XVI-ին հարուստ կարասիքով կահաւորուած, սակայն տեղ-տեղ մի քանի ան-ներդաշնակ, աչք ծակող մանրամասնութիւններով, նորքի պատը զարդարած է մնաւաբս ցանցերով... Զախ կողմին մի բացուած դուռ տանում է դէպի նոյնպէս շքեղազարդ դահլիճ: Մի այլ դուռ՝ դէպի Խսիդոր Լըշայի կարինետը: Ազ կողմին մի մնծ պատուհան բացում է պարկի վրայ, որ լուսաւորուած է արեւի ճառագայթներով: Մի վաղեմի թանգաղին կանի վրայ կաէ Ամօռ—վիրաւորական կերպով տօբերնե, այլափոխուած եւ ծաղրենի, մի վարդ ձեռքին մատուցանելիս... Գեղեցիկ անօթների մօտ Թանգ եւ շոայլ հնութիւններ (ԵՐԻՑ-Ճ-ԵՐԱՑ). Ազ եւ ճախ պատերի վրայ իշխանուհիների եւ վաղեմի ազնուականների պատկերներ: Մի աչքի ընկնող տեղից կախած է Խսիդոր Լըշայի մնծապիր ու բիշուական բեֆլեկտորներ:

\* ) Տես «Մուլճ» № 8:

## ԱՆԱԶԻՆ ՏԵՍԱՐԱՆ

**ԺԵՐՄԷՆ, ԿԱՌԱՎԱՐԻՉԸ.**

(Վարոգոյը բացուելիս ժերմէն մի սեղանի առջեւ նստած՝ մտացնոր, անուշադրութեամբ թերթում է մի պատկերազարդ զիրք։ Յետոյ բարձրանում, գնում է պատուհանի մօտ, անհամթեր նայում, կարծես նա մէկին սպասելիս լինէր։ Կառավարիչը պորտֆեյլը կոնի տակին՝ դուրս է զալիս Խախորի կաթինեալից։ Լուր առանց կանգ առնելու բարեւում է ժերմէնին  
Եւ գնում դէպի թեմի խորքի դուռնը։)

**ԺԵՐՄԷՆ. Պարոն Դը Լա Ֆոնտանէլ...**

**ԿԱՌԻ. Օրիորդ...**

**ԺԵՐՄԷՆ. Իմ հօր մօտիցն էք գալիս։**

**ԿԱՌԻ. Այս, օրիորդ...**

**ԺԵՐՄԷՆ. Ես կարծում էի՝ թէ նա դուրս է գնացել։**

**ԿԱՌԻ. Հա, նա հէնց ճիշտ այս բռպէին սրահով դուրս է գալիս... Գոյն է գնում, կարծեմ...**

**ԺԵՐՄԷՆ. Ինչպէս էր նա այս առաւօտ։**

**ԿԱՌԻ. Շատ լաւ... շատ ուրախ։**

**ԺԵՐՄԷՆ. Շատ ուրախիւ... Նա ձեզ ոչինչ չ'առանց։**

**ԿԱՌԻ. Առանձին ոչինչ, օրիորդ։ Հեռախօսով երկար խօսեց... այն երկու ինժիներների մասին։ Այնուհետև մեր գործերով զրադուեցինք։ (Փոքր լուսիւն։)**

**ԺԵՐՄԷՆ. Մի փոքրիկ նեղութիւն յանձն կառնէք, պարոն Դը Լա Ֆոնտանէլ։**

**ԿԱՌԻ. Մեծ ուրախութեամբ, օրիորդ։**

**ԺԵՐՄԷՆ. Ժիւլը... Պարտիզպանը... Վոպերդիւից արդէն հեռացաւ։**

**ԿԱՌԻ. Այս, երեկ երեկոյեան...**

**ԺԵՐՄԷՆ. Նա այլս այստեղ չի վերադառնալ։**

**ԿԱՌԻ. Ես շատ կը զարմանամ, եթէ հէնց էգուց, վաղ առօտեան նա իմ գրասենեակում չը գտնուի... Ես լաւ եմ ճանաչում այդ խեղճ թշուառներին... նրանց դիմադրութիւնը մէկ օրից աւել չի տեսում...։**

**ԺԵՐՄԷՆ. (Կառավարչին մի ծրար տալով) Կարող էք նեղութիւն կրել՝ նրան յանձնել այս փոքրիկ գումարը։**

**ԿԱՌԻ. Իհարկէ, օրիորդ...**

**ԺԵՐՄԷՆ. Առանց նրան յայտնելու՝ ումնից է այդ...։**

**ԿԱՌԻ. Նա իսկոյն զիմի կընկնի՝ թէ ումնից է...։**

**ԺԵՐՄԷՆ. Դուք պավիլյոնն էք գնում։**

ԿԱՌ. Այս...

ԺԵՐՄԵՆ. Եթէ կարելի է, նեղութիւն կրեցէք Գարրօխն ասել, որ ես ցանկանում եմ նրա հետ խօսել:

ԿԱՌ. Շատ լաւ...

ԺԵՐՄԵՆ. Ես մի քանի տեղեկութիւններ ունեմ նրանից հարցնելու:

ԿԱՌ. Օրիորդ, դուք լաւ գիտէք, որ ես միշտ պատրաստ եմ ձեզ ծառայելու:

ԺԵՐՄԵՆ. Շնորհակալ եմ ձեղանից... (կառավարիչը գլուխ է տալիս եւ կամենում է նեռանալ). Պարոն Դը Լա Ֆոնտենէլ... (Փոքր լուսական) երեկ երեկոյեան այստեղ տեղի ունեցաւ մի շատ ցաւալի... սոսկալի դէպք... (կառավարիչը ձնուքի մի շարժում է անում, կարծես խնդրելի լինէր, որ դրա մասին այլեւս չը խօսուի): Ես ներութիւն եմ խնդրում ձեղանից... (Ձեռքը մնկնում է նրան):

ԿԱՌ. (Շատ յուզուած). Օ՞հ, օրիորդ... (Բոնում է նրա ծեռքը եւ համբուրում): Այդ շարժման ժամանակ նա վայր է գցում իր պորտֆէյլը: Ճերմէն շտապով զերցնում, տալիս է նրան: Կառավարիչը կսկազնով) Օ... բիորդ... օրիորդ...

ԺԵՐՄ. Իւրաքանչիւրը՝ իր հերթին...

ԿԱՌ. (Բոլորովին յուզուած կոկորդը՝ սղմուած). Ես արժանի չեմ, օրիորդ, ձեր բարութեան... Ես վատ եմ ապրել... կեանքեց... հասարակութիւնից գուրս մի էշակ էի ես... Երբ հանդիպեցայ ձեր հօրը... Ի՞նչ կը լինէի ես առանց նրան և այստեղ... առանց ձեզ... (Սրբում է արտասուքի մի կաթիլ). Դուք չը գիտէք...

ԺԵՐՄ. (Երա խօսքը մեղմութեամբ կտրելով). Որ դուք զըժքախտ էք... ես այդ գիտեմ և դրանից աւելի ես այլես ոչինչ չեմ կամենում իմանալ...

(Աալոնի դրան շեմքի վրայ երեւում են ֆինկ եւ գրուգ)

### ԵՐԿՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

ԺԵՐՄԵՆ, ՖԻՆԿ, ԳՐՈՒԴ, ԿԱՐԱՎԱՐԻՉԼ.

ԳՐՈՒԴ. Ներողութիւն, օրիորդ:

ԺԵՐՄ. (Քիչ զոռող քաղաքավարութեամբ). Դուք իմ հօրս էք վնատոււմ:

ԳՐՈՒԴ. Այս, օրիորդ...

ԺԵՐՄ. Հայրս դուրս է գնացել...

ՖԻՆԿ. Ես ուրախութեամբ եմ նկատում, որ դուք երեկուայ նման այլես տկար չէք:

ԺԵՐՄ. Բոլորովին ոչ: (կառավարչին) Պարոն Դը Լա

Թօնտընել... նեղութիւն կրեցէք ուղեկցել այս պարոններին  
հօրս մօտ:

(Նրանք դուքս են գնում):

### ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

**ԺԵՐՄԵՆ, յետոյ ՏԻԿ. ԼՀՇԱ, ապա ՄԻ ՍՊԱՍԱԿՈՐ.**

(Ժերմեն՝ յուզուած, անհամբեր սկսում է նորից քայլել. նա ջղային սաստիկ գրուուած դրութեան մէջ է: Մտնում է տիկ Լըշա՝ զարդարուած, մի պատարագագիրք էլ ծեռքին:)

**S. ԼՀՇԱ.** (Դրան մօտից). Ժերմեն... ինչպէս, դու դեռ պատրաստ չես...

**ԺԵՐՄԵՆ.** Պատրաստ:

**S. ԼՀՇԱ.** (Բոլորովին ներս դալով.) ԶԷ որ ժամն է:

**ԺԵՐՄԵՆ.** Ի՞նչի ժամը...

**S. ԼՀՇԱ.** Եկեղեցի, պատարագ գնալու ժամը... (Նա նըստում է մի բազիամոռի վրայ եւ ձեռնոցների կոճկելը վերջացնում:)

**ԺԵՐՄԵՆ.** Ես եկեղեցի չեմ գնում...

**S. ԼՀՇԱ.** Լաւ... լաւ... Դա ինչ նոր ֆանտազեա է...

**ԺԵՐՄԵՆ.** Դա ոչ նոր բան է... ոչ էլ ֆանտազեա... Ես եկեղեցի չեմ գնում նրա համար, որ դա ինձ դուր չէ գալիս...

**S. ԼՀՇԱ.** Քո հայրը սաստիկ կը բարկանայ... Գիտես՝ նա կամննում է՝ որ մենք ոչ մի պատարագ էլ բաց չը թողնենք, մանաւանդ այժմ...

**ԺԵՐՄԵՆ.** Դա իմ գործս չէ՝ թէ իմ հայրը ինչ է կամննում և ինչ—ոչ... Ես հետեւում եմ միայն իմ ճաշակին... Իսկ իմ ճաշակը ինձ թելադրում է, որ այս առաւօտ ես այստեղ մնամ...

**S. ԼՀՇԱ.** (Յուսահատուած). Ահա... նորից սկսում է...

**ԺԵՐՄԵՆ.** Քանի որ հայրս յանկարծ սկսել է եկեղեցին այդպէս սիրել... ինքը ինչու չէ գնում...

**S. ԼՀՇԱ.** Որովհետեւ նա... այս տարի... հակակղերական է... Սակայն իր գործերի, մանաւանդ իր ընտրութեան տեսակէտից նա օգտակար է համարում, որ մենք եկեղեցի գնանք... Թէս դա հաւանականաբար մի մեծ արդինք չի ունենալ, բայց և այնպէս միթէ յի կարելի է այս բաւականութիւնը նրան տալ...

**ԺԵՐՄԵՆ.** Հիանալի է...

**S. ԼՀՇԱ.** Դա մի քաղաքական կոմբինացեա է...

**ԺԵՐՄԵՆ.** Շատ լաւ... միայն այդ կոմբինացիայի մէջ ես չեմ մտնում...

**Տիկ. ԼՅՇԱ. Բացի այդ... դա քեզ համար մի տեսակ մանդալ... զրուանք է...** Զուարճութիւններից այնքան զնուրկ ես դու...

**ԺԵՐՄ. (Սառնօրէն)** Ես զուարճութիւնների պահանջ չ'ունիմ...

**Տիկ. ԼՅՇԱ.** (Տիկրութեամբ իր աղջկան նայելով). Ճիշտն ասած, իմ խեղճ երեխայ, ես չը գիտեմ՝ մի քանի ժամանակից իվեր բնչ է քեզ պատահել... Յամենայն դէպս, անշուշտ, ոչ լաւ բան... Միշտ մի տեսակ տենդային դրութեան մէջ, շարունակ յուղուած... մեր դէմ աւելի և աւելի զրգուած... Ոչ ոքի չես ուղում տեսնել... Երբ մի մարդ է գալիս մեղ մօտ, դու նրա հետ կոպիտ և անգաղաքավարի... Թողնում, իսկոյն հեռանում ես... Ո՞րքան հաճելի է այդ մեզ համար... Խօսել քեզ հետ այլիս անկարելի է... Այնպիսի բառեր ես արտասանում, որ մարդու վրայ սարսափ են բերում... Եւ դու դեռ զարմանում ես, որ երբեմն քեզ վրայ բարկանում ենք... Թոպէններ են լինում, որ ինքս ինձ հարց եմ տալիս... չը լինի թէ իրօք դու քիչ խելազարուել ես... Վերջապէս... ասա՞... տեսնենք՝ բնչ կայ, բնչ է քեզ պատահել...

**ԺԵՐՄ. Ոչինչ...**

**Տիկ. ԼՅՇԱ. Հիւանդ եմ:**

**ԺԵՐՄ. Ո՞չ...**

**Տիկ. ԼՅՇԱ. Եթէ տանջուում ես դու մի որեէ պատճառով...** ասա ինձ... (Աւելի գորովազին) Վերջապէս... չէ որ ես քո մայրն եմ... ԺԵՐՄ. (Աւելի մեղմաքար). Ես տանջուում չեմ...

**Տ. ԼՅՇԱ. Դու սաստիկ վիշտ ես ինձ պատճառում...** Աղնիւ խօսք, կարծես, քեզ չարջարում, տանջուում են, ամեն ինչից զրկում... Գուցէ դու դժգնի ես մեզանից մէկն ու մէկից... Առաջ, յայտնիր...

**ԺԵՐՄ. Ո՞չ... ոչ...**

**Տ. ԼՅՇԱ. Ուղղակի անհաւատալի է, անհաւատալի...**

Այստեղ դու աղատ ես, որպէս օդ... Գնում ես... գալիս... Որպէս մի տղայ, անում ես, ինչոր քէֆդ է տալիս... Նոյն իսկ հէնց այս առաւօտ դու ինձանից երեք հարիւր ֆրանկ ես ինդրում... Ես տալիս եմ... Ես կարող էի քեզանից հարցնել, պահանջել, որ ինձ ասես՝ բնչ պիտի դու անես այն փողերով... Սակայն ես այդ չեմ անում... Ես տալիս եմ քեզ այնպէս... առանց մի որեէ պայմանի... Շատ կը գտնես այսպիսի մայրեր, չէ... Եւ վերջապէս չէ որ երեք հարիւր ֆրանկը մի պատկառելի գումար է... Քո բարեգործութիւն անելդ էլ... այն էլ այնպիսի մարդկանց համար... որ հոգաչողութեան արժանի չեն... Այս, այս... Վերջապէս ասա, բնչ ես ուզում...

**ԺԵՐՄԵՆ.** Ես ոչինչ չեմ կամենում... Դրանից այլևս չը խօսենք... խնդրում եմ, մայրիկ, դրանից այլևս չխօսենք...

**Տ. ԼՀՇԱ.** Սա ինչ դժբախտութիւն է, Աստուած իմ... Երկու երեխայ ունենամ... Մի որդի, որ երբէք այստեղ չի լինում... որ ինձ տանջանք է միայն պատճառում... Մի աղջիկ, որի ուշ-խելքը միշտ ուրիշ տեղ է... որի հչ ցանկութիւններն են ինձ յայտնի, հչ էլ մտքերը... որից ես չեմ ստացել հչ մի ժափտ, հչ մի գորով... (Խոր հառաջում է)

**ԺԵՐՄԵՆ.** Սակայն... մայրիկ, դա... իմ մեղը չէ...

**Տ. ԼՀՇԱ.** (Գլուխը շարժելով). Անկասկած իմ մեղն է... Այս... այս... ինձ քաջ յայտնի է, որ ես մի բարձր, մի կրթուած կին չեմ... Քեզ հետ չեմ կարող խօսել բարձր առարկաներից... որոնց մասին դու և Գարրօն էք անկասկած խօսում...

**ԺԵՐՄԵՆ** (Հակիրճ կերպով). Մայրիկ... խնդրում եմ... Բաւական է...

**Տ. ԼՀՇԱ.** Ինձ այդպէս չեն կրթել... Դա ճիշտ է... Ես մի առողջ բանականութեան տէր կին եմ... (Լուսնիւն) Խօսակցութեան ժամանակ... սա աւելի անախորժ է... սակայն կեանքի մէջ գուցէ աւելի անհրաժեշտացու...

**ԺԵՐՄԵՆ.** Սակայն, մայրիկ... հարցը բոլորովին դրա մասին չէ...

**Տ. ԼՀՇԱ.** Հա... վերջապէս... Օ՛հ, Աստուած իմ: (Տեղից բարձրանում է): Ուրեմն վճռուած է... Զես գալիս, զնանք եկեղեցի...

**ԺԵՐՄԵՆ.** Ես քեզ հաւատացնում եմ... Ես աւելի տանը մնալի եմ ցանկանում...

**Տ. ԼՀՇԱ.** (Ցանկարծ անհանգտանալով). Ուրեմն... Ես ստիպուած կառքը փոխել պիտի տամ... (Հնիցնում է զանգակը). Դրուտեսնում ես, որ քո քմահանոյքը բոլորին էլ նեղութիւն է պատճառում... (Ներս է զափս ծառան). Գնացէք, ախոռատանը յայտնեցէք, որ կին սօրք-ն յծեն... և միայն մի ճի...

**ԾԱՌ.** Ես հէնց եկել էի տիկնոջը յայտնելու, որ կառքը արդէն պատրաստ է...

**Տ. ԼՀՇԱ.** Victoria կառքը:

**ԾԱՌ.** Այս... տիկին...

**Տ. ԼՀՇԱ.** Այդ ես չեմ ուզում... Ասա, որ սօրք-ն յծեն, կին սօրք-ն...

**ԾԱՌ.** Շատ լաւ, տիկին...

(Դուրս է զնում):

**ԺԵՐՄ.** Դու կ'ուշանաօ... Պատարագին չես հասնիլ...

**Տ. ԼՀՇԱ.** Ոչինչ... քիչ էլ մնայ... ինձ բաւական է...

Սակայն ես չեմ կարող մենմենակ երկու ձիանի վիտորիա-ի մէջ նատել, դա իմ ոյժից վեր է... Նրա մէջ ես ինձ մի տեսակ վատ եմ զգում... Դուցէ դա յիմարութիւն է... ես ասելիք չունիմ դրա դէմ... Բայց ես մենմենակ նրա մէջ ամաչում եմ... Իմ կողքին կամ պիտի մի ժարդ լինի... կամ կապոյներ... (Լոռութիւն) Մինչև կառը լծել-պատրաստելը գնամ, մի քանի կարգադրութիւններ անեմ... (Մի րոպէ մոտածունքի մէջ է ընկնում): Ես յօյս ունիմ, որ այն երկու պարանները այս երեկոյ կը մեկնեն...

**ԺԵՐՄ.** Ես անտեղեակ եմ:

**Տ.** ԼՅՇԱ. Ես չը դիտեմ՝ ովքեր են նրանք... որտեղից են դալիս... բայց տարօրինակ դէմքեր ունեն...

**ԺԵՐՄ.** Ո'չ աւելի տարօրինակ քան միւսները, որ բերում է այստեղ իմ հայրը... Բոլորն էլ միմեանց նման են.

**Տ.** ԼՅՇԱ. Անտարակոյս... Գործնական մարդիկ են դըրանք... Բայց և պնդէս Խսիդորի անդ ես լինէի, դրանցից կը զգուշանայի:

**ԺԵՐՄ.** Մինոյն բանը նրանք իմ հօր մասին կ'ասեն...

**Տ.** ԼՅՇԱ. Լաւ... լաւ... Այլես չարասիրտ մի լինիր... Դու ինձ շես համբուրում:

**ԺԵՐՄ.** Խնչու չէ, մայրիկ...

(Համբուրում է նրան):

**Տ.** ԼՅՇԱ. Ա՛խ, եթէ դու կամենաս... Եթէ քո այս անպիտան փոքրիկ գլուխոյ կամենայ... Ժպտա, ինձ ուրախացնելու համար գոնէ մի անգամ մի լաւ ժպտամ... (Ժպտում է, միայն տրխուր, ակամայ կերպով): Իսկ այն երեք հարիւր ֆրանկը... Ում համար էր...

**ԺԵՐՄ.** Ա՛խ, մայրիկ... չէ որ դու ինձ խոստացել էիր...

**Տ.** ԼՅՇԱ. Լաւ, լաւ... (Գնում է... Հաննելով դրան մօտ՝ նա երեսը յետ է դարձնում) Իմ պատարագագիրքը... (Ժերմէն պատարագագիրքը սեղանի վրայից վերցնելով տախոն է մօրը) Հաւ... Եթէ քո եղբայրը մինչև իմ վերադարձը զայ... լաւ կը լինէր, որ դու նրան մի լաւ խրատես... Տեսնենք՝ այսօր ինչ նոր խարար է բերում...

**ԺԵՐՄ.** Ես Քսաւիէի վրայ ոչ մի ազդեցութիւն չ'ունեմ... Եւ վերջապէս նա անում է այն, ինչ որ իրան է դուր գալիս...

**Տ.** ԼՅՇԱ. Ի՞նչ արած... (Խնդրելով) Հագուստդ փոխիր... Նախաճաշակին լաւ հագնուած լինես... Ես ուզում եմ, որ դու գեղեցիկ երեաս... Խոստանում ես...,

**ԺԵՐՄ.** Այն, մայրիկ:

**Տ.** ԼՅՇԱ. Շատ գեղեցիկ... (Գնում է գնում):

## ԶՈՐՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

**ԺԵՐՄԵՆ, ՊԱՐՏԻԶՊԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԸ.**

(Ժերմէն սկսում է յուզուած մանգալ: Պարտիզպանի օգնականը գալիս է բոյսերը փոխերու: Ժերմէնին տևսնելով՝ նա տատանւում է՝ մտնէ թէ չէ):

**ԺԵՐՄ. ԵԿԵՔ... ԵԿԵՔ...**

**ՊԱՐՏ. ՕԳՆ. ՆԵՐԵԿԵՔ... ՆԵՐՈՂՈՎՔԻՒՆ...** օրիորդ... Այս առաւօտ քիչ ուշացանք... Ժիւլը մեկնում էր... (Հին բոյսերը վերցնում, տեղը նորերն է դնում: Փոխում է նոյնպէս և Առօս-ի ձեռքին գտնուող վարդը, ապա յետ ու յետ գնալով նայում, դիտում է: Հիացած) Որքան գեղեցիկ է...:

**ԺԵՐՄ. ՆՈՐ պարտիզպանը եկել է:**

**ՊԱՐՏ. ՕԳՆ. Այս, հէնց այժմ տեղափոխուում է մեղ մօտ... Մօրուքաւոր... մի բարձրահասակ... սև մարդ է... Ան-քաղաքավարի... կոպիտ... (Աջնատանիքը շարունակելով) Օրիորդ, այս առաւօտ ծագիկներ չեք պահանջել...:**

**ԺԵՐՄ. Ո՞չ... Շնորհակալ եմ:**

(Պարտիզպանի օգնականը գործը վերջացնելով, հին բոյսերը վերցնում, ուզում է դուրս գնալ: Մտնում է լիւսիէն):

**ՊԱՐՏ. ՕԳՆ. Բարի օր, պարոն Գարրօ:**

**ԼԻՒՍԻԷՆ. Բարե, բարե... (Պարտիզպանի օգնականը դուրս է գնում):**

## ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

**ԺԵՐՄԵՆ, ԼԻՒՍԻԷՆ**

**ԼԻՒՍ. (Պարտիզպանի օգնականի հնոանալուց յետոյ). Քեզ հօ ո-չինչ չի պատահել:**

**ԺԵՐՄ. Ոչինչ... ես ուզում էի քեզ տեսնել... քեզ հետ խօսել... Առաւօտեան փոստով ոչ մի լուր չը ստացար:**

**ԼԻՒՍ. Աւազ, հչ մի: (Լոռութիւն):**

**ԺԵՐՄ. Լիւսիէն, գիտես ինչ... այսօր և եթ հարկաւոր է մի բան վճռել... Այսպիսի անորոշ, անյայտ դրութեան մէջ... Երկար ապրել մենք չենք կարոք..., շարունակ երկիւղի և սպանիչ անվճռականութեան մատնուած... Ես գոնէ այլևս անկարող եմ...**

**ԼիիՍ.** (Տիրութեամբ). ԶԵ որ գու հաշտուել էիր՝ քիչ էլ  
համբերլ

**ԺԵՐՄ.** Համբերել... շարունակ համբերել... Օրեր, շաբաթ-  
ներով համբերել... հպատակուել... Մինչև Երբ... Մեր բարօրու-  
թեան, մեր երջանկութեան օրերն են դրանք, որ մենք կորցնում  
ենք... Նախ այս մշտնջենական նեղութիւնը... այս ամեննօրեայ  
կեղծիքը արժանի չեն ոչ քեզ և ոչ ինձ... Ապա այս տունը՝ որ-  
պէս մի ահազին ծանրութիւն, ինձ ճնշում, խեղդում է... Այդ  
ծանրութիւնը այժմ իմ ուժերից վեր է... համբերել ես այլիս  
չեմ կարող... Մի անգամ ընդմիշտ... իմ սիրելի կիւսիչնս, ա-  
ռիաբար, բոլորի առջի, օր ցերեկով լինենք այն, ինչոր ենք  
իսկապէս...

**ԼիիՍ.** Ես քեզ նորից խնդրում... աղաչում եմ մի շտա-  
պիր... միայն մի քանի օր ես... Այն նամակները դու հօ տե-  
սա՞ր...

**ԺԵՐՄ.** Նամակները:

**ԼիիՍ.** Ամենալուրջ խոստումներ ևն պարունակում...

**ԺԵՐՄ.** Խոստումներ...

**ԼիիՍ.** Սակայն, իմ սիրելիս, անկարելի է, որ ես չուառվ  
մի պաշտօն չը ստանամ... և այդպիսով կարող լինեմ քեզ զոնէ  
նիւթական զրկանքներից աղատ պահել...

**ԺԵՐՄ.** Կարիք չը կայ, որ նրան մենք այստեղ սպա-  
սենք... Եթէ մենք մի այդպիսի բախտ ունենալու ենք... նա կա-  
րող է մեղ ժպտալ... և մի ուրիշ, այս տնից հեռու տեղ, ուր  
մենք կը լինենք... երկուսս միասին միայնակ... մտածիր՝ եր-  
կուսս միասին...

**ԼիիՍ.** Սակայն դուցէ... վաղը...

**ԺԵՐՄ.** Վաղը... Ինչու վաղը... Ինչու վաղուան յետած-  
գել... Ո՞չ... հարկաւոր է վերջացնել իսկոյն և եթ... եթէ դու  
ինձ սիրում ես...

**ԼիիՍ.** Եթէ ես քեզ սիրում եմ...

**ԺԵՐՄ.** Լաւ ուրեմն, լսիր... (Բոնելով նրա ծեռքերը), Երբ  
այս զիշեր ես վերադարձայ իմ սենեակը... ես չը կարողացայ  
քննել... Ես դեռ լսում, զգում էի քեզ... այնքան այրող... այն-  
քան կենդանի էին քո խուզերը... քո զգուանքը... քո համ-  
բոյրները... Ես այլես չէի կամենում միայնակ մնալ... Սպա-  
սեցի մինչե առաւօտ... երբ բոլորովին լուսացաւ... ես սենեա-  
կիցս իջայ... զնացի դաշտը... ապա հասայ անտառը... ան-  
չայ... զնացի... զնացի... զնացի... Սկզբում դա ինձ վրայ շատ  
լաւ ազդեց... իմ ջղերը հանդարաւում, խաղաղում էին... ես  
ամբողջովին լցուած էի անհուն ուրախութեամբ և թարմու-

թեամբ... Ես մտածում էի քո մասին... մեր անհուն և վայրենի սիրոյ մասին... վայրենի՝ ինչպէս այն ծառերը, որոնց շաղաթաթափախ ձիւղերին մեղմ, հանդարտ դիպչւլով անցնում էի ես... վայրենի՝ ինչպէս այն ծաղիկները, որոնց գողարիկ նուրբ բուրմունքն էի ես ներչնում... Յնտոյ ես քայլերս՝ ուղղեցի դէպի տուն... Ես գնում էի կամաց-կամաց... Սիրտս անդորր... երջանիկ էի ես... այն գրեթէ երջանիկ... Յանկարծ... անտառի ծուռերի արանքով... ես նկատեցի մեր դղեակը... որ ցցուած էր հեռուում... Մի սարսափելի հարուած էր, որ ես ստացայ.. կարծես մահն էր իմ դիմացը կանգնած... Մի սոսկալի... մի ահօնելի բոպէ էր այդ... Երբէք այրպիսի պարզ կերպով դղեակը չէր պատկերացել իմ առջեն... իր իսկական, ֆիզիքական պատկերով... Ես պարզ կերպով տեսնում էի այն ամենը, ինչ որ նա իր մէջ թագյնում է... ինչ որ նա ճմլում, ջախջախում է... այն ամենը, որ ինչ որ նա սպանում է... իր շուրջը... Այն անտառներ... այն դաշտերը... այս պարկը... արեի ճառագայթներով լուսաւորուած անողոք քարի այս զանգուածը... ոճիր, ոճիր էին կոչում... Որքան ոճիրներ էին այդ ամենի տակ ծածկուած... Դու չես գտնիլ այստեղ խոտի ոչ մի ծիզ... ոչ մի փոքրիկ քար... ոչ մի կածան, որ գողացուած. չը լինի... Եւ այն հողից, ուր ես ման էի գալիս... այն հողից, որ ինձ է պատկանում... չը որ նա իմն է... Ես միմիայն լաց-արտասուք էլ լսում... և միմիայն արիւն էի տեսնում... Ինձ թւում էր, որ իմ շուրջը գտնուղ ամեն, ամեն ինչ ինձ՝ գող... գող... էր կոչում... Իմ ուրախութիւնը յանկարծ տաճանքի փոխուեցաւ... իմ սէրը՝ զայրոյթ և ատելութեան... Ո՛չ... ոչ... ես այլս անկարող եմ... ես այլս անկարող եմ... այստեղ մնալ... Ես կարծում էի, թէ քեզանով միայն կարող կը լինեմ ապրել... թէ քեզ հետ միասին ես կարող էի ամեն ինչ տանել, համբերի... Սակայն ոչ... Եւ եթէ ես այստեղ մընամ, Լիւսիէն... գուցէ քեզ ես սկսեմ տաել...

**ԼիլՍ.** Ուրեմն... դու ուզում ես մեկնել այստեղից:

**ԺԵՐՄ.** (Ուժգին). Այհ... օհ, այհ...

**ԼիլՍ.** Ուր գնանք:

**ԺԵՐՄ.** Ուր որ լինի...

**ԼիլՍ.** Ինչով կ'ապրենք:

**ԺԵՐՄ.** Միթէ ես աշխատել շեմ կարող... Ես եռանդ... կամք ունիմ ազատ և երջանիկ լինելու...

**ԼիլՍ.** Իսկ աշխատանք... Կ'ունենաս: Օ՛հ, իմ սիրելի ժերմէնս... հաւատա ինձ... իրական կեանքը ես աւելի լաւ եմ ճանաչում... այնպիսի ծանր, նեղ հանգամանքներում եմ գրտնուել, կեանքի հետ այնպիսի պաքար մղել... Սկսել քեզ հետ

մի այդպիսի կեանք, որ ևս միայնակ քիչ էր մնում բոլորովին ընկճուէի... ենթարկել քեզ մի այդպիսի փորձանքի... ոհ հչ... ինայիր, ազատիր ինձ այդ տանջանքից... Դու չը գիտե՞՞ թէ թշուառութեան մէջ ինչ սարսափելի մաքեր են անցնում մարդու գլխով... Մարդ երբեմն իր կեանքն է թշուառութեան զոհ բերում... իսկ յաճախ կորցնում, մոռանում է ինքնասիրութիւն, խիզձ..., և որ ամենավատն է սէր... եթէ այդպիսի սարսափելի բոպէներում մարդ դժբախտութիւն ունի սիրահարուելու... Սակայն չը որ ևս ևս ունէի և՛ մտաւոր կարողութիւն... և՛ եռանդ... ձեռքիս էլ մի արհեստ... յամառ և հաստատ կամք աշխատանքով անկախութիւն ձեռք բերել... Այդ ամենը ևս ունէի... միայն գործ-աշխատանք չ'ունէի... Այս, երեք տարի անընդհատ ևս աշխատանք, գործ եմ փնտրել... բայց, աւազ, իզուր... ես բաղխել եմ բոլոր դռները... դարձեալ իզուր... ոչ մի դուռ նոյնիսկ կիսով չափ չը բացուեցաւ... Անհաւատալի է այս քեզ թւում, չը... Սակայն դա իրողութիւն է...

ԺԵՐՄ. Իմ խնդ կիւսիէնս.

ԼԻՒՄ. Որպէսզի սովից բոլորովին չը մեռնեմ... լսում ես... սովից... ևս ստիպուած էի ընդունել անարդ աշխատանք... երբեմն խայտառակ, ամօթալի կոմպրոմիսներ անել... Օ՛հ, եթէ ևս քեզ պատմամ իմ այդ կեանքը... Սակայն չը որ ևս տղամարդ էի, այսինքն մի էակ, որ ունի որոշ արտօնութիւններ և իրաւունքներ... որին հասարակութիւնը... ասում են... թէ թոյլ է տալիս ամեն տեսակ գործունէութիւն... բաց է անում բոլոր ասպարէզները... իսկ դռւ... մի կին ես... և հասարակութիւնը քեզ չի ճանաչում...

ԺԵՐՄ. Դու այնքան էլ ինքո քեզ վրայ վատահ չես սղել... Այժմ մնաք երկու ենք... Երկուսս միասին կը կռուենք...

ԼԻՒՄԻՒՆ. Երկու ենք... որ երկու անդամ յաղթուենք... Ահա թէ ինչու եմ ևս երկուս և խոհեմ...

ԺԵՐՄ. Իսկ ինձ հէնց այդ է համարձակութիւն և յոյս տուողը...

ԼԻՒՄԻՒՆ. Պո էքզալտացեան ինձ սարսափեցնում է, սիրելիս... Այժմ քանի որ քո կեանքը... քո ապագան իմ հոգացողութեանն է յանձնուած... իմ պարտքն է քեզ ծանօթացնել, ցոյց տալ կեանքը այնպէս, ինչպէս նա կայ, և ոչ այնպէս, ինչպէս երազում է քո կրակոտ, վեհանձն բնաւորութիւնը, որ շարունակ ձգտում է անկախ լինել... Կեանքի մէջ անկախութիւն չը կայ...

**ԺԵՐՄ.** Քանի որ նա տանջանքի և ոճրի մէջ է... զուցէ երջանկութեան և մաքրութեան, ամբծութեան մէջ ևս լինի... ԼիիՍիէն. Ոչ մէկում... և հչ միւսում...

**ԺԵՐՄ.** Խակ սիրոյ մէջ...

ԼիիՍիէն. Աւաղ...

**ԺԵՐՄ.** Ուրեմն... դու ինձ չես սիրում... Եթէ դու սիրոյ մէջ կոյր և վեհ հաւատ չունես, որ յաղթում է ամեն, ամեն ինչ, ուրեմն դու ինձ չես սիրում...

ԼիիՍիէն. Ես սիրում եմ, աշխարհիս ամեն ինչից աւելի ես քեզ եմ սիրում...

**ԺԵՐՄ.** Որ այդպէս է, Էլ մի վիճաբանիր... վերցրն ինձ... տար ինձ... Իրականութիւնը միայն այն է, ինչ որ սէրն է ըստեղծում... Մնացածը ոչինչ է... Մնացածը գոյութիւն չունի...

ԼիիՍիէն. Հէնց այդ մնացածն է ամբողջ կեսանքը... Նա կարող է մեզ փշրել, ջարդել... ինձ համար ոչինչ... Ես սովոր եմ... Խսկ գուռ... Ես քեզ սիրում եմ բուռն, խորունկ, յաւիտենական սիրով... ահա թէ ինչու ես չեմ ցանկանում իմ երջանկութեան հետ խաղ խաղար... այլ կամենում եմ նրան պահել... Կը կամենայի նրան պաշտպանել և քո վեհանձն անխոհեմութիւններից...

**ԺԵՐՄ.** Լաւ է, լաւ...

ԼիիՍիէն. Դու կասկածում ես:

**ԺԵՐՄ.** Ոչ..., հչ... օհ հչ... Միայն դու դատում ես տղամարդուն և գիտնականին յատուկ երկչոտ խելքով... Խսկ ես... իմ մէջ խօսում, ճշում է կանացի սիրտը... Դու ես երազների և ցնորքների մէջ ապրում... Ես եմ բնութեան և կեսանքի մէջ... Լաւ... ասս՝ տեսնենք, դու ինչ ես կամենում անել...

ԼիիՍիէն. Դարձեալ սպասել...

**ԺԵՐՄ.** Լաւ... Խսկ եթէ քո սպասածդ չը լինի... երբէք չիրագործուի...

ԼիիՍիէն. Դա անկարելի է...

**ԺԵՐՄ.** Սակայն քիչ առաջ դու երկիւղ էիր կրում... Վերջապէս... Ենթադրիր, որ չիրագործուեց... (Լիսիէն լուսմ է) Տեսնում ես... (Լուսմին) Ոչ... այստեղ մի ուրիշ բան կայ, որ դու չես ասում... Սակայն մի քանի օրից ի վեր քո խօսքերից... Քո ձի ու շարժուածքից ես այն զգում, նկատում եմ... Ահա ասեմ թէ ինչ...

ԼիիՍիէն. Ուրիշ ոչինչ չը կայ... հաւատացնում եմ քեզ...

**ԺԵՐՄ.** Եմ հայրը... Քեզ վատ ես զգում, խիզճդ այնքան էլ հանգիստ չէ նրա նկատմամբ...-

ԼիիՍ. Ոչ ձեր հօր... այլ դուցէ իմ նկատմամբ...

**ԺԵՐՄ.** Դա միենոյն է... Միայն այժմ ուշ է... դրա մասին առաջ էր հարկաւոր մտածել... եւ յետու խղճի անհանգսը-տութիւն իմ հօր... պ. իսիդոր Լըշայի նկատմամբ... անկեղծարար ասած... դա մի աւելորդ չույզութիւն է...

**ԼիիՍ.** Ես նրան շատ բան եմ պարունակութիւնից...

**ԺԵՐՄ.** (Ուսերը Թռութելով) Ինչպէս պ. Դը Լա Թունտրնէլը... Իմ հայրս սուրբ... մարդկութեան բարերար դարձած... Որպիս սի դառն հեղնութիւն...

**ԼիիՍ.** Մի ծաղրին Նա ինձ թշուառութիւնից է աղատել... Ես ոյժից ընկնի, բոլորովին ուժասպառ էի, երբ նա ինձ ձեռք կարկառեց...

**ԺԵՐՄ.** Որպէսզի քեզ աւելի ստորացնէ... որպէսզի քո մտաւոր կարողութիւնները... գիտութիւնը և քո բարոյական առաքինութիւններն ի չարն գործ դնէ... Անկարող լինելով շահագոծել... նրանց դարձեց մի անվայել մասկարագ... ինչպէս դու ինքդ ես ասում, մի պատրանք...

**ԼիիՍ.** (Ցիրութեամբ). Ես այդ մնապարծութեամբ ասացի... չար մնապարծութեան բոպէին...

**ԺԵՐՄ.** (Խստաբար). Սակայն ես... ես չեմ կամենում՝ որ դիպչեն, ստորացնեն այն մարդուն, որին ես սիրում, որով ես պարծենում եմ... (Լուսիւն): Միթք մենք միմնանց սիրելու համար կարիք ունենք ուրիշների համաձայնութեան, հրապարակական երդումների... հանդիսաւոր ստորագրութիւնների... Զէ որ ես այստեղ ամեն օր հօրիցս սովորեցայ, որ դաշինքը, պայմանագրերը նրա համար են միայն, որ նրանց լսախտեն... երդումները՝ որ նրանց դրժեն... (Աւելի հանգստութեամբ) Իսկ ինձ... ազատել է նա արդեօք ինձ թշուառութիւնից... երբ և է նա ինձ ձեռք մեւնել է արդեօք...

**ԼիիՍ.** (Գորովագին տիրութեատմբ). Լաւ հասկացիր... խնդրում եմ... իմ սիրելի ժերմէն... Ես չեմ կամենում քո հօրը պաշտպանել... Գուցէ դու հիմք ունես, անկասկած, և իրաւունք նրան չը սիրելու... բանի որ նրա պատճառով դու այնքան տանջուել ես... Սակայն չէիր կարող նրան չը սիրել առանց անողոքաբար նրան դատելու...

**ԺԵՐՄ.** Ես նրան իմ ատելութեանս չափ եմ դատում... Դրա դէմ ես ոչինչ չեմ կարող անել... (Լիւսիէն ցնցում է). Ի՞նչ պատահեց քեզ...

**ԼիիՍ.** Դու ինձ շատ վիշտ ես պատճառում...

**ԺԵՐՄ.** Ինչու ես դու ինձ այդ ասում:

**ԼիիՍ.** Համոզուած ես արդեօք, որ քո հօրը ճանաչում ես,

համոզուած ես դու արդեօք, որ քո հայրը իր արարքների պատավանատուն է...

**ԺԵՐՄ.** Եթէ իմ հայրս խելագար ինչը... ես կարող էի այդ տանել..: ես կարող էի նոյնիսկ նրան սիրել, իմ սիրովս նրան բժշկել... Բայց... նա խելագար չէ... Մի մարդ, որ այնքան յամառ է... մի մարդ, որ իր ամենաանհեթեթ քմահաճոյքների ժամանակ իսկ իրան երբէք չէ կորցնում, որ նոյնիսկ իր անմտութեան մէջ այնքան լաւ է տրամաբանում,—ոչ, նա խելագար չէ...

**ԼԻԼՄ.** Իմ խեղճ ժերմէնս... (Քաշում է ձերմէնին իր մօտ...) վերցնում է նրա զլուխը, մնոմ, փաղաքշական շարժումներով): Իմ սիրելի յամառ վայրենիս... Օ՞հ, եթէ ես կարողանայի այս զըլիդի մէջ մտցնել աւելի ներողամտութիւն և աւելի գութ... Ա՛խ եթէ ես կարողանայի... (Համբուրում է նրա ճակատը) սրան տալ... կեանքի աւելի ճիշտ ըմբռնումը... (Երկար նայում է նրան): Քո տանջանքների պատճառը աւելի դու ինքդ ես, քան քո հայրը...

**ԺԵՐՄ.** Բոլորովին ոչ... բոլորովին ոչ...

**ԼԻԼՄ.** Այժմ... այժմ... Դու տանջւում ես գերմարդկային երազներով... անկախ, կատարեալ արդարաւթիւն... Եւ քո այդ իդէալը, օ՞հ հաւատա ինձ, ցաւերով լի ապագայ է պատրաստում քեզ համար... Ես սուրբ չեմ... Ես ես բոլորի նման մի մարդ եմ... ունիմ լաւ և վատ կողմեր... վատ կողմեր գուցէ աւելի շատ... Եւ երբ մի օր դու կը նկատես, որ ես ես մի մարդ եմ... մի խեղճ, հասարակ մահկանացու և ոչ քո վառ երևակայութեամբ ստեղծած քիմնը, ցնորքը... ովկ կարող է երաշխաւորել, որ այդ օրը դու ինձ չես ատիլ... Այս ժամանակ ինչ կանես...

**ԺԵՐՄ.** Ցիմարութիւններ ես խօսում...

**ԼԻԼՄ.** Ո՞չ, սա շատ բնական է... Եւ ամենուրէք դու միշտ միենոյն բանը կը տեսնես, ինչ որ ձեզ մօտ է... աւելի կամ պակաս... այս կամ այն ձեռվ... Արտաքինը կարող է փոխուել... բայց հոգին միենոյնն է մնում... Մարդկային խեղճ հոգին է այդ՝ իր ագահութեամբ, իր շահերով... իր եղծիչ կըքերով... իր ոճիրներով... բայց և իր ճակատազրական թշուառութիւններով... Նրան աւելի խղճալ է հարկաւոր, քան ատել... Որովհետեւ նոյնիսկ ամենաաշխատացնեած մարդու... ամենախստասիրա ոճրագործի մօտ միշտ կարելի է տեսնել, գտնել լուսոյ մի փոքրիկ ճաճանչ... որը նրան գթութեան արժանի է դարձնում...

**ԺԵՐՄ.** Գթութիւն... Սակայն քանի որ իմ սիրտս լի է գթութեամբ... ահա թէ ինչու նա լի է և ատելութեամբ...

(Վասիկն մեղմ կերպով ժերմէնից յետ է քաշում. ժերմէն նրան նորից իրան է մօտեցնում) Լաւ... լաւ... սիրալիր և դիր... վերադարձիր... (Լոռութիւնն ժիզ Թափիլով) Ես քեզ բոլորը չը յայտնեցի... ծնողներիս և իմ ամօթխածութիւնը ինայելով... ևս քեզ բոլորը չասացի... Եւ ևս միալուեցայ... Որովհետև սիրող զոյգը պարտ է ամեն ինչ ընդհանուր դարձնել... իրանց ուրախութիւնը... իրանց վիշտը և իրանց ամօթը... Քեզ յայտնի է իմ կեանքի միայն մի մասը... սակայն քեզ ծանօթ չէ իմ ամրող կեանքը... իմ ներքին և գաղտնի կեանքը... Է՞ն, իմացիր և այն... Արժէ որ իմանաս, երդւում եմ քեզ... Խմ մայրս... Ոչինչ կամ շատ թիշ բան է ներկայացնում... Նա նոյնիսկ չար չէ... Նա կարծում է՝ թէ ինձ սիրում է... բայց նրա սիրոց՝ ուրիշների օրինակին հետեւելով, քիչ-քիչ, առանց իր գիտութեան, կոչտացաւ... փոքր խիզճ ունէր, այն էլ յզիութեան և հարստութեան մէջ անհետացաւ... Իր դէպի ինձ ունեցած, ինչպէս ինքն է անւանում, քնքուչութեան հետ նա միացնում է այնպիսի գոեհեկ, այնպիսի անարդ, այնքան օտար, մայրական սիրոյ հետ ոչ մի կապ չ'ունեցող հոգսեր, —որ ես՝ հակառակ իմ թափած ճիգերի և գործ դրած դատողութիւնների, երբէք չը կարողացայ նրան մայր համարել, իմ մայրը համարել...

ԼիիՍ. Դու նրա նկատմամբ մնծ պահանջներ ես ունեցել։ ԺԵՐՄ. (Քիչ զրոյուած). Ի՞նչ ես ինձ այրպէս նեղացնում... Բնչու ես ինձ այդպէս ջղային դարձնում... Ես նրանից ոչինչ չէ ինդրում... երբեմն մի ճպիտ... վստահութիւն... բարութիւն... այն բարութիւն... Միթէ իրօք շատ բան եմ պահանջման... Բայց դու նրան չես ճանաչում... Նա պարտ էր այս տան մնջը քաւել... Նա կարող էր հեշտ իրագործելի բարիքներով, —եթէ բնական առատաձեռնութիւն չ'ունէր, —իր կանացի վարւողութեսում կարող էր թեթևացնել, նուազացնել այն շարիքը, որ տարածում է իմ հայրը ամենուրեք... Սակայն նա ոչինչ չարեց, ոչինչ... Նա զգում է, թէև մութ կերպով, բայց զգում է իմ հօր բալոր մեքենայութիւնները, մութ գործերը, մոլեգին և արիւնարբու ախորժակը... Բայց և այնպէս չը նայած իր փոքրիկ գանգաաներին, փոքրիկ բողոքներին, նա՝ չնորհիւ իր ամուսնական պարտականութիւնների սիսայ ըմբռնման, պաշտպանում է հօրս բոլոր գործերը, նրանց ծառայում... և հարկաւոր եղած դէպքում նրանց վրայ նոյնիսկ նորերն աւելացնում... (Աւելի դառնութեամբ). Եւ ես նրան մեղադրում եմ ոչ նրա համար, որ նա ինձ չէ սիրում, այլ որ ես ինքս չը կարողացայ նըրան սիրել... այնպէս, ինչպէս ես կը ցանկանայի սիրած լինել իմ հարազատ մօրը...

**ԼիիՍ.** Սակայն, իմ սիրելի ժերմէնս, քո ասածներդ լսելուց յետոյ ևս նրան աւելի եմ խղճում... Մարդիկ զթութիւն են շարժում աւելի իրանց թուլութիւններով, երբեմն ծաղրելի կողմերովի քան իրանց առաջինութեամբ... Որքան ևս քո մօրը ճանաչում եմ, նա մի խեղճ, թոյլ և մութ արարած է... փարթամ հարստութեան մէջ ինքն իրան կորսրած... աքսորութեան մատնուած... Նա անում է այն, հնչ որ կարող է...

**ԺԵՐՄ.** (Դողալով). Իոկ իմ հայրը... նա ևս այն է անում, ինչ որ կարող է... Արևանգում... բորսային ճարպիկ խաղեր... շանտամներ... գոփանք... խարերայութիւն... որ նա եգործերս անունով է քողարկում... և սպանութիւններ... Ահա նրա պատմութիւնը,

**ԼիիՍ.** Դու միայն վասն ես տեսնում, երբէք լաւը չես նկատում, որ գտնուում է միշտ վատի մօտ... Սակայն չը նայած հօրդ վատ, աարսափելի բնաւորութեան... նա մնձ մեծ բաներ էլ է կատարել...

**ԺԵՐՄ.** Իմ ինչիս են հարկաւոր... քանի որ նա ինձ համար ոչինչ չի արելու... Մեծ բաներ... Օ՞հ, թող ինձ իմ ասելիքս վերջացնեմ... Ես այսօր պահանջ եմ զգում քեզ յայտնելու, քո առաջ աղաղակելու իմ բոլոր զգուանքը... Երբ ես կը վերջացնեմ... գուցէ դու կը հասկանաս և այն ժամանակ կը կայացնես քո վճիռը... Ահա այդ երկու անձանց մէջ եմ ես ապրել... մեծացել... Անխնամ... աշբաթող՝ մի օտար էլ ես... ընտանեկան կենդանուց էլ ցած... Երևակայում ես Պարփղի մեր տունը և այստեղ՝ այս գղեակը... և ինձ նրանց մէջ... Մի՛ կատարեալ դժոխք... ուր ես հչ մի անգամ չը պատահեցի խաղաղ, անդորր հպացքներ... ուրախ, երջանիկ դէմքեր... ուր ես ոչ մի անգամ չը լսեցի քաղցր և բարի խօսք... Տենդային աճապարանք... յուզմունք... դժբախտութիւն... ծամածառղ ծիծաղ... ոճրի ապոթէողը... Մարդիկ են անընդհատ գալիս... գնում և այլես չը վերադառնում... ինչպէս երեկ՝ չը գիտեմ որտեղից եկած այն երկու յիմարները... Նրանք այս երեկոյ պիտի վերադառնան՝ կորցնելով իրանց հարստութիւնը, եթէ ունեն և իրանց պատիւը, եթէ զեռ պատիւ ունեն... (Լուսթիւն—Աւելի ցաւազին ծայնով): Պատահում են երբեմն մեղսակից դէմքեր... սակայն աւելի յաճախ՝ զոհեր... անծանօթ թշուառներ, որոնց լաց ու կոծի, ծայրայեղ կարօտութեան մասին ես իմանում էի հօրս պատմուածքներից... Երեկուները, ընթրիքի ժամանակ, հայրս նստում օտարների և մնր առաջ պատմում էր իր քաջագործութիւնները... Ո՞րպիսի չարագուշակ լսնդութեամբ... մարդասպանի իսկական քրքիջով նա մեղ պատմում է՝ թէ ինչպէս է խարել սրան, կողոպանել միւ-

սին... պատիւը արատաւորել մի երրորդին... Եւ դու դեռ ինձ կշտամբում ես, թէ ես գութ չ'ունեմ... Ա՛խ, Լիւսիէն, Լիւսիէն... Դու չը գիտես... այս երկար ու ձիգ նզովուած տարիների ընթացքում ես միմիայն գթութեամբ եմ ապրել... Փռղոցում սպաւոր ինոչ և փոքրիկ երեխաներ հանդիպելիս ինքս ինձ հարց էի տալիս. «Գուցէ սրանց սգի պատճառը ես մենք ենք»: Մէկի արտասուքը տեսնելիս ինքս ինձ ասում էի. «Գուցէ մեր պատճառով է արտասում»:

ԼիիՍ. (Խորին խանդաղատանքով) Ի՞նչու ես դու քեզ այդպէս տանջում...

ԺԵՐՄ. Դժբախտաբար... դրանից ես արդէն տուժել եմ... Բանկիր Գաբրիէլ Դոփէնի մասին դու ոչինչ չես լսել:

ԼիիՍ. Այս, լսել եմ:

ԺԵՐՄ. Եւ գիտես, թէ, նա ինչպէս է մեռել

ԼիիՍ. Գիտեմ, ինքնասպանութեամբ...

ԺԵՐՄ. Նրա ինքնասպանութեան պատճառը մենք ենք եղել... (Լէսիէն ցնցում է) Այո, այո, պատճառը մենք ենք եղել... Ես չեմ կարող քեզ լաւ բացատրել այդ գրամայի բոլոր մանրամասնութիւները... Առետրական գործերից առհասարակ ես ոչինչ չեմ հասկանում... Սակայն ահա թէ ինչ կարողացաւ ես իմանալ... ինչ իմ ականջիս հասաւ... ինչ որ Պարիզում խօսում էին ամենուրեկը... Լրագիրները... ոչ... նրանք համբ էին... չէ որ հայրս նրանց պաշտօնակիցն էր... Եւ յետոյ նա անկասկած նրանց կաշառած կը լինի... (Ժերմէնի ձայնը դորդում է...) Դէմքը ցաւ եւ տանջանք է արտայայտում):

ԼիիՍ. Քո այդ յիշողութիւնները քեզ ցաւ են պատճառում... իմ սիրելի Ժերմէնս... Զեռքերդ այրւում են... Հեկեկանք եմ ես քո ծայնից լսում..., բաւական է... ես քեզ ինզըրում եմ...

ԺԵՐՄ. Ոչ... ոչ... ընդհակառակը, դա ինձ թեթևութիւն է պատճառում... Կարծես մի ցաւ, որ ինձ տանջում, խողխողում է, հանում ձգում եմ ինձանից... (Շարունակելով) Դոփէն վտանգի մէջ, յուսահատ, չիմանալով ինչ անել՝ վերջին ծայրայեղ միջոցին է դիմում... գալիս է իմ հօր մօտ և ինդրում՝ իրան ազատել... Թէ ինչ առուծախս է նրանց մէջ տեղի ունենում,— ես այդ չը գիտեմ... ինչ գաղտնիք... ինձ անյայտ է... Միայն գիտեմ այն, որ հօրս մի խարուսիկ օգնութեան... գուցէ մի աննշան խոստման համար Դոփէն ստիպուած իր բանիի բոլոր մնացած ակցիաները բերում, յանձնում է իմ հօրը պահելու, լսելու և պահելու... Մի քանի օրից յետոյ յանկարծ բորսայում ծախւում են միենոյն ակցիաները միանգամից, բոլորը միասին... Դա մի ընդ-Սեպտեմբեր, 1903.

հանուր սարսափ էր... Արժէթղթերը իշնում են... նրանց հետ միասին խորաակում է և Դոֆէնի առետրական տունը... Դո- ֆէնը՝ գունատ... խելագարուած... դէմքը այլայրւած, վագում, զա- լիս է իմ հօր մօտ... Խնդրում... սպառնում... հօրս առջ՝ ծնկաչոք կանցնած աղերսում... «Ձեր կողմից դա մի ոճրագործութիւն է»—«Ռի, դա իմ իրաւոնքն է»: «Դուք ինձ կորստեան էք մատ- նում»—Ես ինձ ապահովացնում եմ»: «Սակայն ես իին, երե- խաներ ունեմ»—«Ես նոյնպէս»: «Դուք ինձ ինքնասպանութեան դուռն էք հասցնում»—«Նատ իմ հարկաւորն է»... Դոֆէնը վե- րադառնում է տուն և ատրճանակի մի հարուածով վերջ դնում իր կեանքին... Les affaires sont les affaires...

ԼիլԱ. Քատմնելի է... Սակայն չէ որ Դոֆէնը նոյնպէս մի խարերայ, մի գող էր...

ԺԵՐՄ. Այդ ժամանակ նա մի թոյլ... մի դժբախտ, մի յաղ- թուած է ակ էր... Օ՛հ, Լիւսիէն!

ԼիլԱ. Գուցէ դա մի առասպել է:

ԺԵՐՄ. Օ՛հ, լոիր... Զուտ ճշմարտութիւն... Ես գնացել էի տիկին Դոֆէնի մօտ... նա ամեն ինչ ինձ պատմեց... Ես նը- րա ոտքերն ընկնելով՝ նրանից ներողութիւն եմ խնդրել... և նը- րա հետ սիասին արտասուել... Եւ այս մէկը չէ... երկու, երկու... հարիւր... հազար այլ դէպեր... Այժմ զու կարող ես ասել, որ ես հօրս դատելու իրաւոնք չունեմ... (Լիւսիէնը լուսմէ): Այժմ հասկանում ես դու արդթօք՝ թէ ինչու ես ուղում եմ թողնել, հեռանալ այս տանից, ուր իւրաքանչիւր մի քար, հողի իւրա- քանչիւր մի կտոր արտասուքներով ողողուած է գնուել... (Լիւ- սիէնը լուսմէ): Ես քեզ ասում էի, որ իմ ծնողները ինձանով եր- բէք չեն զբաղուել... Ես սկալուեցայ... Ո՛չ. նրանք հոգում էին իմ մասին և, այ, զու կը տեսնես՝ որպիսի անձնութեամբ և ընտանեբար... Իմ հայրը ինձ ամուսնացնելու համար մի տարօ- րինակ սովորութիւն ունէր... այն է՝ իմ միջոցով մեծ գումարներ կորզել կամ ձեռնտու պայմաններ կազել... Մի շահաւէտ գործ իր օգտին ծառայեցնելու, ի նպաստ իրան վճռելու համար նա ինձանով էր մարդկանց հրապուրում... Ես նրա համար այլիս մի մարդկային էակ չէի... այլ դարձնել էի փոխանակութեան արժէ- թուղթ, սպեկուլիացիայի արժէթուղթ... Աւելին կ'ասեմ, յաճախ նա առուծախոր վերջացնելուց, պայմանագրերը կապելուց յե- տոյ ինձ էլ վրան աւելացնում, վեշքէշ է անում... այնպէս, ինչ- պէս մսագործը միսը կըսել-վերջացնելուց յետոյ, իր մուշտա- րու խաթթի համար մի փոքրիկ կտոր միս է կարում, զցում... Ո՞զ կարող է ասել, որ այս րոպէին այն Գրուզի և Ֆինկի հետ նա հէնց ինձանով չէ առետուր անում...

**ԼիիՍիէն.** Քո կերքը քեզ չեղում, սխալեցնում է, իմ սիրելի ժերմէնս... Ի՞նչու միայն ք հօրն ես մնդադրում, երբ բոլորն էլ ամուսնութեան վրայ այդպէս են նայում... Քանի որ երկու սիրող էակների սուրբ միութիւնը դարձրել են իւկ և իսկ առուծախսի առարկայ, դաշինք, նոտարի մօտ կապուած, կնքուած, սոտորագրած պայմանագիր... աւելի կամ պակաս վայրագութիւն, աւելի կամ պակաս խայտառակութիւն այդ առուծախսի ժամանակ... ոչ մի բան չի փոխում... դարձեալ ամուսնութիւն է... Քիչ առաջ դու ինքըդ էիր ասում... մեզ ինչ քանի որ մեզք ազատ, մաքուր, սուրբ սիրով ենք միմանց հետ կապուած... Մոռացիր, Ժերմէն, այդ անցեալդ... ես քեզ աղաչում, պաղատում եմ...

**ԺԵՐՄՄ.** Ես կը մոռանամ... եթէ դու կարող ես, եթէ դու կամնաս ինձ մոռացնել տալ... Եւ ահա ինչ եմ կամնում ես քեզ ասել... Փոխանակ այդ կեանքի դէմ ապստամբելու... ես կարող էի նրա հետ հաշտուել, նրան ընդունել... Միայնակ... առանց խրախուսանքի... առանց նեցուկի... առանց բարեկամի... մարդ վերջիվերջոյ պայքար մղելուց յոգնում է... Օրինակը... սովորութիւնը... բարոյական միայնակութիւնը... կարող են յաղթել ամենաաննկուն խղճմտութիւնն... և ամօթխածութիւնն... Խայտառակութեան, ամօթի և ոճրագործութեան այս մթնոլորտում ես՝ անդիտակցար կարող էի անկումիցանկման դալով, գալհասնել Քսավիէի դրութեան... Թէ ինչպէս ի ինչու ապականութիւնից ես ազատուած եմ մնացել... ճիշտն ասած, ինքս էլ լաւ չը գիտեմ... Ես կարծում եմ, որ դրա պատճառը սկզբում իմ զայրոյթը, ծնողներիս դէմ մղած իմ պայքարն էր... յետոյ իմ սէրը... Աւայն որպիսի տարօրինակ՝ մոգեր եմ ես իմ գլխից հեռացրել... Ա՛խ, կիւսիէն... կիւսիէն... եթէ ես քեզ ասեմ... որ քանի-քանի անդամ... զղուած... ծնողներիցս վրէժինդիր լինելու... նրանց ստորացնելու մի վայրենի ցանկութեամբ... Քիչ էր մնում գայթակղուէի, անձնատուր լինէի սպասաւորների կամ ախոռատան ծառայողներից մէկն ու մէկի կրքերին...

(Նրա ծախը փոխում է, կոկորդը սեղմուում):

**ԼիիՍ.** Ժերմէն... (Խանդաղատանքով բռնկուած վերցնում է նրա ծեռքիրը) Ժերմէն, լոփր... այդ մի ասա... երբէք այդպէս մի խօսիր... ճիշտ չէ քո ասածը...

**ԺԵՐՄՄ.** Նրանց դէմքերը իրապէս աւելի պակաս ցինիկ և մութ էին, քան մարդկացին այն բոլոր էակների, որ դալիս գընում էին մեզ մօտ...

(Արտասում է)

**ԼիիՍ.** Ժերմէն... Ժերմէն... հանգստացիր... պաղատում

եմ... Քո վստահութիւնը... քո ուղղամտութիւնը... քո ողու վեհանձնութիւնը... քո ամրիծ սրբութեան իդէալդ... աղատ և արդար կեանք ունենալու բուռն ցանկութիւնդ... և քո տանջանքները... Ահա թէ ինչի համար եմ ես քեզ սիրում. աւելի այդ ամենի, քան քո գեղեցկութեան համար... Հէնց դրա, հէնց այդ ամենի համար էր... որ ես քիչ առաջ ցնցուեցի... Լաւ ուրեմն... մենք կը մեկնենք... այս Մենք կը մեկնենք, երբ դու կամենաս... Եթէ կամենաս... հէնց այսօր...

**ԺԵՂՄ.** Այո... այն... Սակայն հչ իբրև գողեր, որ թագնը ւում են... Մենք կը մեկնենք բոլորի ներկայութեամբ... պարզերես, բաց ճակատով... հանգիստ սրտով...

**ԼԻԼՍԻՒԵՆ. Այն...**

**ԺԵՂՄ.** Եւ ամեն ինչ ինձ թնդ... իմ սիրելի լիւսիէնս... Ես հասկանում եմ քո խղճահարութիւնը, քո կասկածները... Քանի որ ես այդ չունեմ... ես պիտի գործեմ: Վերադարձիր, սիրելիս, պաւիլիոն: Հարկաւոր է, որ քո հաշիւները մաքուր լինեն, քա մատեանները՝ կարգին: Ես չեմ ցանկանում, որ իմ հայրը կարող լինի... այդ կողմից քեզ մի որեէ բանում մեղադրել... Համբուրիր ինձ... Գրկիր ինձ ամուր, ամուր (Նրանք զրկանանը-տւմ են): Դու ոչ մի բանում չես փոշմանիլ, միամիտ եղիր... Երբ մենք երկուսս միասին կը լինենք... միասին, հեռու այստեղից... դու կը տեսնես, ինչպէս ես ուրախ կը լինեմ... այս իմ տղեղ աջքերը երբէք... երբէք այլնս տիսուր չեն լինիլ... և դու էլ ինձ այլես չես կշտամբիլ... և ինձ այնպէս կը սիրես... ես քեզ այնպէս կը սիրեմ... Դու կը տեսնես, կը տեսնես՝ ինչպէս մենք երջանիկ, բախտաւոր կը լինենք...

**ԼԻԼՍ. Այն,** այն... երջանիկ կը լինենք... Եթէ միայն գու չը կամենաս, որ մեր երջանկութիւնը մեղանից, կեանքից բարձր, չնաշխարհեկ լինի...

**ԺԵՂՄ.** Զար... (Լոռութիւն) Մեր երջանկութիւնը... միթէ շատ ջանք գործ դրիր... մինչև որ կարողացար նրաննուածել... (Լոռութիւն) Փող ունեմս...

**ԼԻԼՍ. (Ամազելով)** Այժմ բաւական... ունեմ... Պարիզում կը ճարեմ... կը գտնեմ...

**ԺԵՂՄ.** Գնամ... դնամ... իմ խեղճ սիրելիս: Եւ դղեակից մի հեռանայ...

(Լիւսիէնը դուրս է գնում)

(ԺԵՂՄ-նը ուրախ-զուարթ նայում է նրան):

**Ս. ՇԽԵԱՆՑ**

(Կը շարունակուի)